

## Պատճառական բայեր (Causative / Factitive) Ե խոնարհում

**անեմ** (1եզ.անց.կատ. *անեցի*) չբ 'անել, մեծանալ, բազմանալ, շատանալ; զարգանալ, առաջադիմել'  
**անեցուց-անեմ** (1եզ.անց.կատ. *անեցուցի*) պբ 'անել տալ, անեցնել'

Սահմ. ներկա		Անցյալ անկատար		Ստորադաս. 1-ին ապառնի		Արգելական հրամ.	
սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.
<b>Եզ.</b>	անեմ անես անե	անեմ անես անե	անեի անեիր աներ	անեցուցանեի անեցուցանեիր անեցուցաներ	անեցուցանեցեմ անեցուցանեցես անեցուցանեցե	անեցուցանեցեմ անեցուցանեցես անեցուցանեցե	մի' աներ մի' անեցուցաներ
<b>Հգ.</b>	անեմք անեք անեն	անեմք անեք անեն	անեաք անեիք անեին	անեցուցանեաք անեցուցանեիք անեցուցանեին	անեցուցանեցեմք անեցուցանեցեք անեցուցանեցեն	անեցուցանեցեմք անեցուցանեցեք անեցուցանեցեն	մի' անեք մի' անեցուցանեք

Անցյալ կատարյալ		Ստորադաս. 2-րդ ապառնի		Բռն հրամայական	
սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական
<b>Եզ.</b>	անեցի անեցեր անեաց	անեցուցի անեցուցեր անեցոյց	անեցից անեսցես անեսցե	անեցուցից անեցուցես անեցուցե	անեա' անեցե' < *անեցո' [յց]
<b>Հգ.</b>	անեցաք անեցեք/իք անեցին	անեցուցաք անեցուցեք/իք անեցուցին	անեսցուք անեսցիք անեսցեն	անեցուցուցուք անեցուցուցիք անեցուցուցեն	անեցե'ք անեցուցե'ք

**անցանեմ** (1եզ.անց.կատ. *անցի*, հրամ. *անց*) չբ 'անցնել'  
**անցուց-անեմ** (1եզ.անց.կատ. *անցուցի*, հրամ. *անցո՛ւ*) պբ 'անցնել տալ, անցկացնել'

Սահմ. ներկա		Անցյալ անկատար		Ստորադաս. 1-ին ապառնի		Արգելական հրամ.	
սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.
<b>Եզ.</b>	անցանեմ անցանես անցանե	անցանեմ անցանես անցանե	անցանեի անցանեիր անցաներ	անցանեցեմ անցանեցես անցանեցե	անցանեցեմ անցանեցես անցանեցե	մի' անցաներ մի' անցուցաներ	
<b>Հգ.</b>	անցանեմք անցանեք անցանեն	անցանեմք անցանեք անցանեն	անցանեաք անցանեիք անցանեին	անցանեցեմք անցանեցեք անցանեցեն	անցանեցեմք անցանեցեք անցանեցեն	մի' անցանեք մի' անցուցանեք	

Անցյալ կատարյալ		Ստորադաս. 2-րդ ապառնի		Բռն հրամայական	
սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական
<b>Եզ.</b>	անցի անցեր (է-)անց	անցուցի անցուցեր անցոյց	անցից անցցես անցցե	անցուցից անցուցես անցուցե	անց անցե' < *անցո' [յց]
<b>Հգ.</b>	անցաք անցեք/իք անցին	անցուցաք անցուցեք/իք անցուցին	անցցուք անցցիք անցցեն	անցուցուցուք անցուցուցիք անցուցուցեն	անցե'ք անցուցե'ք

## Պատճառական բայեր (Causative / Factitive) ի խոնարհում

**ապրիմ** (1եզ.անց.կատ. **ապրեցայ** [բայց նաև **ապրեցի**]) չբ 'փրկվել, ազատվել, կենդանի մնալ, պրծնել'; նբ (տես **ապրեցուցանեմ**). աղյուսակում ներկայացված է միայն հիմնական՝ կրավորաձև խոնարհումը.

**ապրեցուցանեմ** (1եզ.անց.կատ. **ապրեցուցի**, հրամ. **ապրեցո՛ւ**) պբ 'փրկել տալ, ազատել, պրծացնել, կենդանի պահել'

Սահմ. ներկա		Անցյալ անկատար		Ստորադաս. 1-ին ապառնի		Արգելական հրամ.	
սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական
<b>Եզ.</b> ապրիմ ապրիս ապրի	ապրեցուցանեմ ապրեցուցանես ապրեցուցանե	ապրեի ապրեիր ապրեր	ապրեցուցանեի ապրեցուցանեիր ապրեցուցաներ	ապրիցիմ ապրիցիս ապրիցի	ապրեցուցանիցեմ ապրեցուցանիցես ապրեցուցանիցե	մի՛ ապրիր	մի՛ ապրեցուցաներ
<b>Հզ.</b> ապրիմք ապրիք ապրին	ապրեցուցանեմք ապրեցուցանեք ապրեցուցանեն	ապրեաք ապրեիք ապրեին	ապրեցուցանեաք ապրեցուցանեիք ապրեցուցանեին	ապրիցիմք ապրիցիք ապրիցին	ապրեցուցանիցեմք ապրեցուցանիցեք ապրեցուցանիցեն	մի՛ ապրիք	մի՛ ապրեցուցանեք

Անցյալ կատարյալ		Ստորադաս. 2-րդ ապառնի		Բուն հրամայական	
սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական
<b>Եզ.</b> ապրեցայ ապրեցար ապրեցաւ	ապրեցուցի ապրեցուցեր ապրեցոյց	ապրեցայց ապրեսցիս ապրեսցի	ապրեցուցից ապրեցուցես ապրեցուցե	ապրեա՛(ց)	ապրեցո՛ւ < *ապրեցո՛ւյց
<b>Հզ.</b> ապրեցաք ապրեցայք, -արուք ապրեցան	ապրեցուցաք ապրեցուցեք/իք ապրեցուցին	ապրեսցուք ապրեսցիք ապրեսցին	ապրեցուցուք ապրեցուցիք ապրեցուցեն	ապրեա՛յք, -արո՛ւք	ապրեցուցե՛ք

**ուսանիմ** (1եզ.անց.կատ. **ուսայ**, հրամ. **ուսի՛ր**) հբ 'սովորել, ուսանել, վարժվել, հմտանալ՝  
**ուսուցանեմ** (1եզ.անց.կատ. **ուսուցի**, հրամ. **ուսո՛ւ**) պբ 'սովորեցնել, ուսուցանել'

Սահմ. ներկա		Անցյալ անկատար		Ստորադաս. 1-ին ապառնի		Արգելական հրամ.	
սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական
<b>Եզ.</b> ուսանիմ ուսանիս ուսանի	ուսուցանեմ ուսուցանես ուսուցանե	ուսանեի ուսանեիր ուսաներ	ուսուցանեի ուսուցանեիր ուսուցաներ	ուսանիցիմ ուսանիցիս ուսանիցի	ուսուցանիցեմ ուսուցանիցես ուսուցանիցե	մի՛ ուսանիր	մի՛ ուսուցաներ
<b>Հզ.</b> ուսանիմք ուսանիք ուսանին	ուսուցանեմք ուսուցանեք ուսուցանեն	ուսանեաք ուսանեիք ուսանեին	ուսուցանեաք ուսուցանեիք ուսուցանեին	ուսանիցիմք ուսանիցիք ուսանիցին	ուսուցանիցեմք ուսուցանիցեք ուսուցանիցեն	մի՛ ուսանիք	մի՛ ուսուցանեք

Անցյալ կատարյալ		Ստորադաս. 2-րդ ապառնի		Բուն հրամայական	
սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական
<b>Եզ.</b> ուսայ ուսար ուսաւ	ուսուցի ուսուցեր ուսոյց	ուսայց ուցիս ուցի	ուսուցից ուսուցես ուսուցե	ուսի՛ր	ուսո՛ւ < *ուսո՛ւյց
<b>Հզ.</b> ուսաք ուսայք, -արուք ուսան	ուսուցաք ուսուցեք/իք ուսուցին	ուսացուք ուսացիք ուսացին	ուսուցուք ուսուցիք ուսուցեն	ուսա՛յք, -արո՛ւք	ուսուցե՛ք

## Պատճառական բայեր (Causative / Factitive) ա խոնարհում

**կամ** (1եգ.անց.կատ. կացի; հրամ. կա՛ց, կացե՛ք) չբ կանգնել, կանգնած լինել, հաստատուն մնալ; հաստատվել, տեղավորվել; լինել, գոյություն ունենալ; ապրել, որոշ ժամանակ մնալ; սպասել; կանգ առնել, դադարել, վերջանալ՝

**կացուցանեմ** (1եգ.անց.կատ. կացուցի; հրամ. կացո՛ւց, կացուցե՛ք) պբ կանգնեցնել; դնել, տեղավորել; նշանակել, կարգել; անել, իրագործել՝

	Սահմ. ներկա		Անցյալ անկատար		Ստորադաս. 1-ին ապառնի		Արգելական հրամ.	
	սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.
<b>Եգ.</b>	կամ	կացուցանեմ	կայի	կացուցանեի	կայցեմ	կացուցանիցեմ		
	կաս	կացուցանես	կայիր	կացուցանեիր	կայցես	կացուցանիցես	մի՛ կար	մի՛ կացուցաներ
	կայ	կացուցանե	կայր	կացուցաներ	կայցե	կացուցանիցե		
<b>Հգ.</b>	կամք	կացուցանեմք	կայաք	կացուցանեաք	կայցեմք	կացուցանիցեմք		
	կայք	կացուցանեք	կայիք	կացուցանեիք	կայցեք	կացուցանիցեք	մի՛ կայք	մի՛ կացուցանեք
	կան	կացուցանեն	կային	կացուցանեին	կայցեն	կացուցանիցեն		

	Անցյալ կատարյալ		Ստորադաս. 2-րդ ապառնի		Բուն հրամայական	
	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական
<b>Եգ.</b>	կացի	կացուցի	կացից	կացուցից		
	կացեր	կացուցեր	կացցես	կացուցցես	կա՛ց	կացո՛ւ < *կացո՛ւ [յց]
	կաց	կացոյց	կացցե	կացուցցե		
<b>Հգ.</b>	կացաք	կացուցաք	կացցոք	կացուցցոք		
	կացեք/իք	կացուցեք/իք	կացջիք	կացուցջիք	կացե՛ք	կացուցե՛ք
	կացին	կացուցին	կացցեն	կացուցցեն		

## Հուլիսյան վարժություններ 1

**Ա.** Վարժություններ **ապրիմ** բայով՝ կրավորաձև խոնարհմամբ

- 1. «Պատվեր տվեք բազմաց ի վերայ Բաբելոնի, ամենայն աղեղնաւորաց՝ թէ բանակե՛ք [բանակիմ չբ {11 տամ}] դրա շուրջը [1 բառով՝ 6 տամ] շուրջանակի. զի մի՛ ոք իցէ որ փրկվի [ապրիմ չբ, I ապառնի] դրանից»:  
 ► Պատուէ՛ր տուք բազմաց ի վերայ Բաբելոնի, ամենայն աղեղնաւորաց՝ թէ բանակեցարո՛ւք զդովաւ շուրջանակի. զի մի՛ ոք իցէ որ **ապրիցի** ի դմանէ:  
 ☐ Երեմիա ծ.29 (Չօհրապեան 1805, 3. 624):
- 2. «որ թեպետ փրկվեց **X**-ից [հնդեվր. \*gobh-], իրավունքը (թույլ) չ**X** [հնդեվր. \*h<sub>1</sub>e-deh<sub>3</sub>-] ապրել [կ...]:»  
 ► որ թեպետ ապրեցաւ ի ծովէն, իրաւունքն ո՛չ ետուն կեալ:  
 ☐ Գործք առաքելոց իր.4 (Չօհրապեան 1805, 4. 315):
- 3. «Ահա այս քաղաքը [հուն. ցեղակից՝ μέχρη] է. այնտեղ կփրկվեմ [II ապառնի]:»  
 ► Ահա քաղաքս այս մերձ է <...>: Անդ **ապրեցայց**:  
 ☐ Ծննդոց ժթ.20 (Չեյթունյան 1985. 227):
- 4. «Եթէ եսավը **X** [հնդեվր. \*h<sub>1</sub>e-gʷem-] առաջին բանակը և **Y** [հնդեվր. \*H(e)r-g- կամ \*pr-g-] նրան, երկրորդ բանակը կփրկվի [երեք բայերն էլ՝ II ապառնի]:»

- ▶ Եթե **եկեսցե** եսև յառաջին բանակն եւ **հարցե** գևա, **ապրեսցի** երկրորդ բանակն:  
 ☐ Ճննդոց լր.8 (Չեյթունյան 1985. 297):

## Բ. Վարժություններ նույն բայի պատճառակաՆով

- 1. «Արդ եղիցի, եթե տեսնեն եգիպտացիները և ասեն, թե՛ սա նրա **X**-ն [հնդեվր. *\*gʷenh₂-*] Է, և սպանեն ինձ և քեզ ողջ թողնեն [բոլոր 4 բայերը՝ I ապառնիով], կասես [ատես II ապառնի], թե՛ նրա **Y**-ն [հնդեվր. *\*syesōʃ*] եմ, <...>»:

- ▶ Արդ եղիցի, եթե տես**անիցեն** եգիպտացիքն եւ ա**իցեն**, թե **Կին** նորա Է սա, եւ սպան**անիցեն** զիս եւ զքեզ **ապրեսցուցանիցեն**, [13] ա**սացես**, եթե **Քոյր** նորա եմ, <...>:

☐ Ճննդոց ժր.12-13 (Չեյթունյան 1985. 198):

**NB!** Նկատե՛ք I և II ապառնիների նրբերանգային տարբերությունը:

- 2. «և **X** [< հնդեվր. *\*h₁e-dʰeh₁-*] Դավիթը ամրոց Ասորիքում՝ Դամասկոսում, և էին Դաւթի ծառայք՝ բերել նրան ընծաներ: Եվ փրկեց Տերը Դավիթին ամեն տեղերում՝ ուր և գնում էր [երթամ չք]: Եվ առավ Դավիթը ոսկեղեն մանյակները, որ Ադրաազարի ծառաների մոտ էին, և [քերականորեն ստույգ գեղակից՝ սանս. *á-bhar-at*] այն երուսաղէմ»:

- ▶ Եւ **եդ** Դաւիթ ամրոց յԱսորիս՝ ի Դամասկոսի, և էին Դաւթի ծառայք՝ բերել նմա ընծայս: և **ապրեսցոյց** Տեր զԴաւիթ յամենայն տեղիս ուր և երթայր: Եւ ա՛ռ Դաւիթ զմանեակսն ոսկեղէնս, որ էին ի ծառայսն Ադրաազարայ, և **եբեր** զայն յերուսաղէմ:

☐ Ա Մնացորդաց ժը.6-7 (Չօհրապեան 1805, 2. 287-288): Հմմտ. ստորն՝ Խալաթեանց 1899. 34-35:

- 3. փրկի՛ր մեզ մեր թշնամիներից, որ օրհնեք [II ապառնի] քո **X** [հնդեվր. *\*kubʰ-ro-*] **Y**-ը [հնդեվր. *\*h₃neh₃-mʷ*]:

- ▶ **ապրեսցի**՝ զմեզ ի թշնամեաց մերոց. զի օրհն**եսցուք** զանուն քո **սուրբ**:

☐ Ա Մնացորդաց ժգ.35 (Չօհրապեան 1805, 2. 285):

- 4. «և մի կին աղաղակեց [աղաղակեմ չք] առ նա և ասում է. Փրկի՛ր ինձ, տեր արքա: Եվ ասում է. Տերը քեզ չի փրկի [II ապառնի], ո՞րտեղից / ինչպե՞ս փրկեմ [II ապառնի] քեզ»:

- ▶ և կին մի աղաղակեաց առ նա և ասէ. **Ապրեսցի** զիս տեր արքայ: Եւ ասէ՛ մի՛ **ապրեսցուցե** զքեզ Տեր. ուստի՞ **ապրեսցուցից** զքեզ:

☐ Դ Թագաւորութեանց գ.26-27 (Չօհրապեան 1805, 2. 206):

## Գ. Վարժություններ կամ բայով

**կամ** (1եզ.անգ.կատ. *կացի*; հրամ. *կա՛ց, կացե՛ք*) չք՝ կանգնել, կանգնած լինել, հաստատուն մնալ; հաստատվել, տեղավորվել; լինել, գոյություն ունենալ; ապրել, որոշ ժամանակ մնալ; սպասել; կանգ առնել, դադարել, վերջանալ՝

**կացուցում եմ** (1եզ.անգ.կատ. *կացուցի*; հրամ. *կացո՛ւ*) պք՝ կանգնեցնել; դնել, տեղավորել; նշանակել, կարգել; անել, իրագործել՝

- 1. «Եվ ասում է՝ մի՛ մոտեցիր [բայի արմատի գեղակից՝ հուն. *μέχρι*] այսր. քո **X**-ները [իրան. *փոխառ.*, հմմտ. միջ. պարսկ. *kafš* + ածանց] արձակի՛ր/հանի՛ր [հնդեվր. *\*leug-*, ներկա միջածանցով՝ *\*lu-n-g-*] քո **Y**-երից [հնդեվր. *\*pod-i-*]. որովհետև (այդ) տեղը, որում կանգնած ես դու «դրանում», [գեղակից՝ սանս. *śubhrá-*] երկիր է»:

- ▶ և ասէ՛ մի՛ **մերձե**նար այսր. **լո՛յծ** զկօշիկս քո՛ յոտից քոց. զի տեղիդ յորում **կաս** դու ի դմա՛ երկիր **սուրբ** է:

☐ Ելից գ.5 (Չօհրապեան 1805, 1. 113):

• 2. Եւ յաճախ յակն «**X-ի**» [հուն. *φρέαρ*, սեռ. *φρέατος n*; գործ. *brunna*] ի ներքոյ սարաբարձր մեհենատեղոյն Հերակլայ, որ [*կայ*, Յեզ.սահմ.ներկայ] դէմ յանդիման լերինն մեծի՝ որում Յուլն անուանեալ կարդան, ի բազնին տեղւոջէ ի բացագոյն իբրև քարընգէ մի ի ներքոյ կուսէ, ի դոյզն ծործորակին ի սակաւ անտառակին ի **Y**-ուտ [հնդեվր. *\*Hh<sub>3</sub>(e/o)sk-i(j)eh<sub>2</sub>-*] պուրակին՝ որում անուն տեղոյն իսկ **Y**-ացն դրախտ [հնդեվր. *\*g<sup>w</sup>ot-je-*, Յոզն.սահմ.ներկայ]:

▶ Եւ յաճախ յակն **աղբերն** ի ներքոյ սարաբարձր մեհենատեղոյն Հերակլայ, որ **կայ** դէմ յանդիման լերինն մեծի՝ որում Յուլն անուանեալ կարդան, ի բազնին տեղւոջէ ի բացագոյն իբրև քարընգէ մի ի ներքոյ կուսէ, ի դոյզն ծործորակին ի սակաւ անտառակին ի **hug**ուտ պուրակին՝ որում անուն տեղոյն իսկ **Հացեացն** դրախտ **կոչեն**:

☐ Փաստոս Բուզանդ 3.ժդ (1883=1984. 33):

• Լրացուցիչ աշխատանք. Վերականգնե՛ք **X-ի** հնդեվրոպական նախաձևի ուղղական հոլովն ու թեք հոլովահիմքը:

▶ Հնդեվր. ուղղական հոլ. *\*b<sup>h</sup>reh<sub>1</sub>u-r-*,

թեք հոլովահիմք *\*b<sup>h</sup>rh<sub>1</sub>u-n(t)-*

• հուն. *φρέαρ*, սեռ. *φρέατος n*;

• հայ. *աղբեր / աղբիւր*;

• գերմ. *\*brunna(n)- m.* > գործ. *brunna*, հին իսլ. *brunnr*, հին անգլ. *brunna*, հին վերին գերմ. *brunno*, հոլանդ. *bron*

• 3. «Հարցրեց [ձևաբանական ճշգրիտ ցեղակից՝ սանս. अग्रच्छत् *ágrcchaf*] նրանց, թե ո՞վ է այդ. և դուք ինչո՞ւ [հի՞մ] իջալ կանգնած եք այդ [նախադաս] տեղում»:

▶ **Եհարց** ցնուսա՝ թե ո՞վ է այդ. և դուք հի՞մ իջեալ **կայք** յայդմ տեղւոջ:

☐ Փաստոս Բուզանդ 5.լէ (1883=1984. 205; անգլ. թարգմ.՝ Garsoian 1989. 220):

• 4. որ և անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ: Չի յայնժամ դեռ ևս շէն «էին/կային» [հնդեվր. *\*trejes*] բազինք «նրանում». առաջին՝ մեհեանն Վահեվանեան, երկրորդն՝ Ոսկեմօր Ոսկեծին «**X-ի** [հնդեվր. *\*d<sup>h</sup>eh<sub>1</sub>s-*, գրաբարում՝ անեզական]», և բազինն իսկ յայս [հուն. *ὄνομα, -ατος n*] անուանեալ Ոսկեհատ Ոսկեմօր [նույնը]. և երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան [նույնը], Սենեակ **Y-ի** [իրան. *վոխառ.*, հմմտ. ավեստ. *Vərəθrayna-*] **Z**-ացեալ [հնդեվր. *\*g<sup>w</sup>rH-d<sup>h</sup>h<sub>1</sub>-*], որ է ըստ յունականին Ափրոդիտե:

▶ որ և անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ: Չի յայնժամ դեռ ևս շէն **կային երեք** բազինք ի նմա. առաջին՝ մեհեանն Վահեվանեան, երկրորդն՝ Ոսկեմօր Ոսկեծին **դից**, և բազինն իսկ յայս **անուն** անուանեալ Ոսկեհատ Ոսկեմօր **դից**. և երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան **դից**, Սենեակ **Վահագնի կարդացեալ**, որ է ըստ յունականին Ափրոդիտե:

☐ Ազարթանգեղոս § 809 (1909=1980. 422):

• 5. Ինքնուրույն աշխատանք.

Գրե՛ք խորենացու գրառած վիպասանական այն պատառիկը, որտեղ գործածված է մեր բայի I ապառնին (եթե անգիր չեք հիշում, ապա գտե՛ք ու արտագրե՛ք), և թարգմանե՛ք արդի հայերեն:

▶ Եթե դու յորս հեծցիս

յԱզատն ի վեր ի Մասիս,

գբեգ կալցին քաջք, տարցին

յԱզատն ի վեր ի Մասիս.

անդ կայցես, և գլոյս մի՛ տեսցես:

«Եթե դու հեծնես ու որսի գնաս

դեպի Ազատ Մասիս,

քեզ բռնեն քաջքերը և տանեն

դեպի Ազատ Մասիս.

այնտեղ մնաս և լույս չտեսնես»:

☐ Մովսէս խորենացի 2.կա (1913=1991. 192, տող 2 և հաջ.):

- 6. «Այս ասացին նրա **X**-ները [հնդեվր. *\*ǵenh<sub>1</sub>-tleh<sub>2</sub>-*], քանի որ վախճանում էին [երկնչիմ չբ] հրեաներից. քանզի <հրեաներից [սեռականով ենթակա] ուխտ էր **Y**-ված [հնդեվր. *\*h<sub>1</sub>e- + \*d<sup>h</sup>eh<sub>1</sub>-*] (հրեաները երգվել էին)>, որ եթե մեկը նրան Քրիստոս խոստովանի [խոստովանեմ նբ (նաև -իմ հբ), II ապառնի], դուրս կարվի [ի բաց կամ, II ապառնի] ժողովարանից [ժողովուրդ, սեռ. ժողովորդան]»:  
 ► Չայս ասացին **ձևող**քն նորա, զի երկնչէին ի հրեիցն. քանզի ուխտ եղեալ էր հրեից, եթե ոք խոստովանեցեալ Քրիստոս՝ ի բաց կացցէ ի ժողովորդենէն:  
 ☐ Յովհաննես թ.22 (Չօհրապեան 1805, 4. 205):
- 7. «Հեռու մնացեք [ի բաց + կամ] այդ տեղից»:  
 ► Ի բաց կացեք ի տեղւոյդ յայդմանէ:  
 ☐ Ա եգր գ.27 (Չօհրապեան 1805. 396):

## Դ. Հավելյալ վարժություններ

### Նփոթում եք.

**բազմիմ** (1եգ.անց.կատ. բազմեցայ) չբ 'հանդիսավոր՝ պատվով նստել, բազմել; սեղան նստել՝  
**բազմեցուցանեմ** (1եգ.անց.կատ. բազմեցուցի, հրամ. բազմեցոմ) պբ 'բազմել տալ, բազմեցնել,  
 պատվով նստեցնել՝

VS.

**բազմանամ** (1եգ.անց.կատ. բազմացայ) չբ 'շատանալ, ավելանալ, առատանալ, լցվել՝  
**բազմացուցանեմ** (1եգ.անց.կատ. բազմացուցի) պբ 'բազմացնել, մեծացնել, շատացնել, աճեցնել,  
 ավելացնել, առատացնել՝

- 1. «Եվ կնայեմ [հայիմ + ի] ձեզ, և կաճեցնեմ [աճեմ չբ-ի պբ] ձեզ, և կբազմացնեմ [բազմանամ չբ-ի պբ] ձեզ, և կհաստատեմ [հաստատեմ նբ] իմ ուխտը ի ձեզ [բոլոր բայերը՝ II ապառնի]»:  
 ► Եւ հայեցայց ի ձեզ. և աճեցուցից զձեզ, և բազմացուցից զձեզ, և հաստատեցից զուխտ իմ ի ձեզ:  
 ☐ Ղեւտական իգ.9 (Չօհրապեան 1805, 1. 248):
- 2. Թարգմանե՛ք գրաբար.  
 «Եւ վասն Իսմայելի ահա լսեցի քեզ և կօրհնեմ [աւրինեմ նբ] նրան և կաճեցնեմ նրան և կբազմացնեմ նրան հույժ [բոլոր բայերը, բացի առաջինից, դրե՛ք II ապառնի-ով]»:  
 ► Եւ վասն Իսմայելի ահա լուայ քեզ եւ արինեցից զնա եւ աճեցուցից զնա եւ բազմացուցից զնա յոյժ:  
 ☐ Ծննդոց ժե.20 (Չեյթունյան 1985. 217):  
**Ննթ. լսեմ** նբ 'լսել'; + տր. 'ունկնդիր լինել հոժարությամբ, անսալ, հնազանդվել՝
- 3. Նախ ամենեքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածեին բազմեցուցանեին զարքայն Արշակ:  
 ա) Թարգմանե՛ք արդի հայերեն:  
 բ) Առանց բառարաններ նայելու տվե՛ք այս նախադասության մեջ երկու անգամ հանդիպող բայի 1եգ.սահմ.ներկա ձևը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:  
 ► Նախ ամենեքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածեին բազմեցուցանեին զարքայն Արշակ:  
 «Նախ բոլորը բազմեցին ըստ իրենց աստիճանների, հետո բերին բազմեցրին Արշակին»:  
 ☐ Փաւստոս Բուզանդ 4.ծդ (1883=1984. 143; հմմտ. Garsoïan 1989. 172):

- 4. «Տիրոջ ձայնը շարժում է անապատը, և խռովեցնում է [խռովեմ'նր > պր] Տերը անապատը [Կձճդ]»:

▶ Ձայն Տեռն շարժե՛ գանապատն, և խռովեցնա՛ն է՛ Տեր գանապատն **Կադես**:

☐ Սաղմոս իր.8 (Չօհրապեան 1805, 3. 34):

- 5. Բացատրե՛ք այս երկու բայաձևերը և մեր խորհրդանշանային գույներով ներկե՛ք ու մեկնաբանե՛ք դրանց ձևույթները. **ածիցեք** և **ածեցեք**

▶ **ածիցեք** – *ածեմ* բայի 2հոգ.Իսպ

**ածեցեք** – *ածեմ* բայի 2հոգ.անց.կատ/հրամ

• 6. **Պատմալեզվական**

Բացատրե՛ք Վանի բարբառի **զախախորել** բայի ծագումը և բառակազմական ու հնչյունական նրբությունները: Մատնանշե՛ք նաև նույն ծագումն ունեցող բայց կազմությամբ մի քիչ տարբերվող հայերեն գոյականը, որտեղ **զախախորել** բայի երկրորդ վանկի *ա* ձայնավորը ներկա է (ի տարբերություն **զախախորել** բայի գրաբարյան նախածնի, որտեղ այն չկա):

▶ **q-արհ-ոյր-** > \***q-արհ-ա-հ-ոյր-** (-*ա*- հոդակապ և -*հ*- հորանջ, հմմտ. *զհիհ, երգեհոն, Զարահունջ* և այլն) >

> \***q-ա(ր)հախոյր-** >

> Վան. **q-ախախոր-**

◆ Հոդակապի համար հմմտ. նույն ծագման **արհ-ա-լիր-ք** բառը:

	Նախած.	Արմատ	հոդակապ	հորանջ	2-րդ արմատ	[Գոյական՝ հոգն. -ք]
<b>q-արհ- ոյր-</b>	<b>q-</b>	<b>արհ</b>			<b>ոյր</b>	
<b>արհ-ա- Լիր-ք</b>		<b>արհ</b>	<b>ա</b>		<b>Լիր</b>	<b>-ք</b>
* <b>q-արհ-ա-հ- ոյր-</b>	<b>q-</b>	<b>ա(ր)հ</b>	<b>ա</b>	<b>հ</b>	<b>ոյր</b>	
<b>q-ախ- ա-խ-որ-</b>		<b>ախ</b>	<b>ա</b>	<b>խ</b>	<b>որ</b>	

• 7. **Նախորդ վարժության մեջ դիտարկված զարհուրիմ չեզոք բայով**

«Եվ զարհուրեց [զարհուրիմ չք] հոգին [անձն] նրա և հոգին [անձն] նրա ժողովրդի [ժողովուրդ, սեռ. ժողովրդեան]. ինչպես որ [զոր օրինակ] կշարժվի [I ապառնի / II ապառնի] անտառում մի ծառ հողմից [հողմ, ո հոլ.]: <...>: Եվ կասե՛ս [II ապառնի] նրան. Չգո՛ւյշ եղիր, հանդարտվի՛ր [հանդարտեմ չք (հանդարտեցի)] և մի՛ վախեցիր [երկնչիմ]. և (թող) չզարհուրի՛ [II ապառնի] քո անձը երկու ծխացող փայտերից [ի հոլ.]՝ խանձողներից: Որովհետև երբ [զի յորժամ] իմ սրտմտության բարկությունը հասնի/հասունանա/անցնի [հասանեմ չք, I ապառնի], դարձյալ կբժշկեմ [II ապառնի]»:

▶ Եւ **զարհուրեցաւ** անձն նորա, և անձն ժողովրդեան նորա. զոր օրինակ շարժիցի (var. lect. շարժեցի) յանտառի ծառ մի ի հողմոյ: <...>: Եւ աս**ացե՛ս** ցնա. զգո՛ւյշ լեր՝ հանդարտեա՛, և մի՛ երկնչիր. և մի՛ **զարհուրեցի** անձն քո յերկուց փայտից խանձողացն ծխելոց. զի յորժամ հասանիցե՛ բարկութիւն սրտմտութեան իմոյ, դարձեա՛լ բժշկեցից:

☐ Եսայի Է.2/4 (Չօհրապեան 1805, 3. 337):

Հրաչ Մարտիրոսյան

11.08.2021, Leiden

[hrch.martirosyan@gmail.com](mailto:hrch.martirosyan@gmail.com)